


Շաբաթական ամփոփ ակնարկ

Մակրո | Բաժնետոմսեր | Պարտատոմսեր |
Կրիպտոարժույթներ | Հաշվետվություններ |
Ֆյուչերսներ




Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծությունը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն**: Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում**, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում**:

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **գուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը**: Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Չինաստանը պատմական տեմպերով ավելացնում է իր ոսկու պաշարները:



ԱՄՆ պետական պարտատոմսերի եկամտաբերությունները 2007 թվականից ի վեր ամենաբարձր մակարդակում են:



Շուկաները նախորդ շաբաթ՝ ամփոփ


Վերամշակված նավթամթերքի գները շարունակում են աճել:




ԴՊՀ-ի կողմից տոկոսադրույքի բարձրացման հավանականությունը գնահատում է շուրջ 75%:




Նախորդ շաբաթ S&P500-ը նվազեց 0.77%-ով




Նախորդ շաբաթ Nasdaq-ը նվազեց 0.57%-ով



Նախորդ շաբաթ Dow Jones-ը նվազեց 1.55% -ով




Նախորդ շաբաթ Russell 2000-ը նվազեց 2.41%-ով




Նախորդ շաբաթ ԱՄՆ բոլոր հիմնական բաժնետոմսային ինդեքսները արձանագրեցին բացասական եամտաբերություն: Ամենախորը անկումը գրանցեցին փոքր կապիտալիզացիա ունեցող ընկերությունները և Dow Jones-ը, մինչդեռ S&P 500-ը և Nasdaq-ը համեմատաբար ավելի կայուն էր:



S&P 500-ում գրեթե բոլոր ոլորտներն անկում գրանցեցին՝ բացառությամբ սպառողական հիմնական ապրանքների ոլորտին: Առավել խորը անկում գրանցեցին նյութերի և տեխնոլոգիական ոլորտները: Նավթի զգալի թանկացմանը, էներգետիկ ոլորտը գրեթե չարձագանքեց, ինչը ցույց է տալիս, որ ներդրողները կասկածում են նավթի բարձր գների կայունությանը:



AI ոլորտի բոլոր առաջատար ընկերությունների բաժնետոմսերը նվազեցին:



Ծրագրային ապահովման բաժնետոմսերը ևս ավելի թույլ դինամիկա արձանագրեցին՝ հետ մնալով ընդհանուր շուկայից:

Կիսահաղորդիչների բաժնետոմսերը զգալի ճնշման տակ էին և դարձան առավել խորը անկում գրանցած հատվածներից մեկը:

IGV - 60min L:1015.81 -0.42 -0.41% TS=200 TE=MA100Q B=1015.41 B5=106 A=1015.42 AS=1.500 O=103.85 H=102.72 Lo=100.59 V=5554.05



SOX - 60min L:4518.81 -5.29 -2.52% TS=40 TE=ARCE B=4518.86 B5=46 A=4518.85 AS=40 O=451.32 H=452.50 Lo=451.31 V=5079.11



Oracle (ORCL)-ի հասույթը 2026 թվականի երկրորդ եռամսյակում կազմել է 16.1 մլրդ դոլար՝ տարեկան կտրվածքով աճելով 14%-ով: Մեկ բաժնետոմսի դիմաց ճշգրտված շահույթը (EPS) կազմել է 2.26 դոլար՝ աճելով 54%-ով: Աճի հիմնական շարժիչը Cloud Infrastructure (OCI) հատվածն էր, որի հասույթն աճել է 68%-ով՝ հասնելով 4.1 մլրդ դոլարի, իսկ ընդհանուր Cloud Revenue-ն կազմել է 8.0 մլրդ դոլար՝ աճելով 34%-ով: Հատկապես ուժեղ էր AI ենթակառուցվածքների նկատմամբ պահանջարկը:

Adobe (ADBE)-ը 2026 թվականի երկրորդ եռամսյակում գրանցել է ռեկորդային 6.62 մլրդ դոլարի հասույթ՝ տարեկան կտրվածքով աճելով մոտ 13%-ով: Մեկ բաժնետոմսի դիմաց ճշգրտված շահույթը (EPS) կազմել է 5.96 դոլար՝ աճելով մոտ 18%-ով: Աճի հիմնական շարժիչներից մեկը ընկերության AI լուծումների նկատմամբ ուժեղ պահանջարկն էր, AI-first ARR-ը տարեկան կտրվածքով ավելի քան եռապատկվել է և գերազանցել 500 մլն դոլարը: Ուժեղ արդյունքների շնորհիվ Adobe-ն բարձրացրել է 2026 թվականի հասույթի և EPS-ի կանխատեսումները:



Kroger (KR)-ի 2026 թվականի երկրորդ եռամսյակի հասույթը կազմել է մոտ 34.6 մլրդ դոլար, իսկ մեկ բաժնետոմսի դիմաց ճշգրտված շահույթը (EPS)՝ 1.09 դոլար, ինչը տարեկան կտրվածքով աճել է մոտ 5%-ով: Identical Sales-ը՝ առանց վառելիքի, աճել է ընդամենը 0.2%-ով, մինչդեռ adjusted eCommerce sales-ը աճել է 20%-ով: Ընկերությունը պահպանել է ամբողջ տարվա EPS-ի կանխատեսումը, սակայն ավելի թույլ սպառողական միջավայրի և այլ բացասական գործոնների պատճառով նվազեցրել է identical sales growth-ի կանխատեսումը 1.5%-ից մինչև 0.4%-ի:


Copart (CPRT)-ի հասույթը 2026 ֆինանսական տարվա երկրորդ եռամսյակում կազմել է մոտ 1.1 մլրդ դոլար՝ տարեկան կտրվածքով նվազելով 3.6%-ով: Մեկ բաժնետոմսի դիմաց ճշգրտված շահույթը (EPS) կազմել է 0.36 դոլար՝ նախորդ տարվա 0.40 դոլարի համեմատ նվազելով 10%-ով: Համախառն շահույթը նվազել է 6.2%-ով՝ մինչև 492.8 մլն դոլար, իսկ զուտ շահույթը՝ 9.5%-ով՝ մինչև 350.7 մլն դոլար: Այսպիսով, ի Copart-ի Q2-ը արձանագրել է հասույթի և շահութաբերության որոշակի թուլացում:




Շուկան այժմ ԴՊՀ-ի կողմից տոկոսադրույքի բարձրացման հավանականությունը գնահատում է շուրջ 75%: Եթե մինչև նիստը ՍԳԻ-ի ցուցանիշը էական անակնկալ չմատուցի, տոկոսադրույքը չբարձրացնելը շուկայի համար մեծ անակնկալ կլինի:



ԱՄՆ պետական պարտատոմսերի եկամտաբերությունները շարունակում են մնալ 2007 թվականից ի վեր ամենաբարձր մակարդակներին մոտ: Նավթի բարձր գները ուժեղացնում են գնաճային ճնշումները, ինչը սահմանափակում է եկամտաբերությունների նվազման հնարավորությունը: 10-ամյա պարտատոմսերի եկամտաբերությունը մոտեցավ 5%-ին, սակայն 30-ամյա պարտատոմսերի ուժեղ աճուրդը ցույց տվեց բարձր պահանջարկ և որոշ չափով մեղմեց ճնշումը:



Դոլարը ուրբաթ օրը
հասցրեց ետ բերել
շաբաթվա ընթաց-
քում գրանցած
անկումը:



Պղնձի գինն ուրբաթ
կտրուկ անկում գրան-
ցեց, իսկ շաբաթվա
կտրվածքով հիմնա-
կան մետաղների մեծ
մասը արձանագրեց
բացասական եկամ-
տաբերություն:



WTI նավթի գինն ուրբաթ գերազանցեց 100 դոլարը՝ մոտենալով պատերազմի ընթացքում գրանցված առավելագույն մակարդակներին: Գների աճին նպաստում են աշխարհաքաղաքական լարվածությունը, Իրանի և ԱՄՆ-ի միջև հակամարտության սրումը, ինչպես նաև հուլիսի ալիքների ակտիվացումը Սաուդյան Արաբիայի դեմ: Միաժամանակ, Սաուդյան Արաբիայի նավթի արդյունահանումը նվազել է՝ հասնելով 1990 թվականից ի վեր ամենացածր մակարդակին:



WTI ֆյուչերսներում ռոբոտացված առևտրային համակարգերի դիրքերը ներկայումս 91%-ով երկար են:

Goldman Sachs-ը նշել էր ամսի 7-ին, նավթի գների ռիսկերը շարունակում են հիմնականում ուղղված լինել աճին: Brent-ը կարող է գերազանցել 120 դոլարը մեկ բարելի դիմաց, եթե Պարսից ծոցի նավթի արդյունահանումը մնա նախապատերազմյան մակարդակից օրական մոտ 4 մլն բարելով ցածր:

Միևնույն ժամանակ, կարևոր է ոչ միայն հում նավթի գինը, շուկայի համար առավել կարևոր կարող է լինել վերամշակված նավթամթերքների, հատկապես դիզելային վառելիքի շուկայում իրավիճակը:



Նախորդ շաբաթ
Բիթքոինը և
նվազեց՝ իջնելով
77,000 դոլարից
ցածր:



Կարմիր ծովի շրջանցիկ երթուղին նոր հարված ստացավ

Հուլիսին արդեն նշվում էր, որ Սաուդյան Արաբիայի՝ Հորմուզի նեղուցը շրջանցող այլընտրանքային երթուղին լուրջ ճնշման տակ է: Յանբուլից Թայվան նավթի փոխադրման ժամանակը 19 օրից հասել էր 48-ի:




Նավթային յուրաքանչյուր մեծ ցնցում կարծես կրկնել է նույն սցենարը՝ աշխարհաքաղաքական ազդակ -> ֆիզիկական մատակարարման խափանում -> ռիսկի թերագնահատում -> գների կտրուկ վերագնահատում:

Սակայն այս անգամ կա էական տարբերություն, նախորդ ճգնաժամերը հիմնականում հարվածում էին առաջարկին, պահանջարկին կամ քաղաքականությանը: Այս անգամ ճնշման տակ են բոլորը՝ միաժամանակ:

Every Time Oil Crises Shook the World


A look at the global oil shock timeline



Չինաստանը շարունակում է պատմական տեմպերով ավելացնել իր ոսկու պաշարները

Օգոստոսին Չինաստանի կենտրոնական բանկը ձեռք է բերել ավելի քան 20 տոննա ոսկի՝ շարունակելով արդեն 22 ամիս անընդմեջ իրականացվող գնումների շարքը: 2026 թվականի սկզբից Չինաստանի պաշտոնական ոսկու պաշարներն աճել են ավելի քան 80 տոննայով՝ հասնելով ռեկորդային 2,387 տոննայի: Համեմատության համար՝ ամբողջ 2025 թվականին աճը կազմել էր մոտ 29 տոննա: Այս տեմպերը հստակ ցույց են տալիս՝ Չինաստանը շարունակում է ակտիվորեն մեծացնել ոսկու կշիռը իր պահուստներում:

China's Gold Reserves Keep Climbing



Source: China State Administration of Foreign Exchange (SAFE) | GoldSilver

Ապրանքային ցիկլի շրջադարձը սկսվել է

Ապրանքահումքային ակտիվների և S&P 500-ի հարաբերակցությունը երկարատև անկումից հետո սկսել է շրջվել: Հարաբերակցությունը 2015–2024 թվականներին հասել էր վերջին 50 տարվա ամենացածր մակարդակին: Նախորդ նմանատիպ ցածրակետերից՝ 1977, 1999 և 2008 թվականներից հետո, սկսվել են տարիներ տևած ապրանքային ցիկլեր: Այս անգամ ցածրակետը պահպանվեց ավելի երկար: Այժմ շրջադարձի առաջին նշաններն արդեն տեսանելի են.

նավթը՝ 100 դոլարից բարձր, պղինձը՝ ռեկորդային բարձր մակարդակներում, եվրոպայում էներգակիրների գները՝ բարձր, իսկ վառելիքի պաշարները՝ ճնշման տակ:

Բաժնետոմսերը պարտադիր չէ, որ կտրուկ նվազեն, բավական է, որ դադարեն տարեկան 20% տեմպով աճել:

Commodity Prices vs. S&P 500

Ratio of Commodity Prices to the S&P 500 Index

Commodities have gone through cycles of outperformance and underperformance relative to the stock market.

DIFFERENT
CYCLES.
SAME
STORY.



GEOPOLITICS
Supply shocks drive commodity spikes



INFLATION
Commodities tend to outperform in inflationary periods



TECH CYCLES
Periods of strong stock market gains weigh on commodities



MEAN REVERSION
Commodities and stocks move in cycles

COMMODITIES STILL MATTER.


Ճապոնիայի բանկը շարունակում է գերիշխել JGB շուկայում

Հիմա Ճապոնիայի բանկին է պատկանում երկրի պետական պարտատոմսերի մոտ 46%-ը: Թեև սա 2023-ի գազաթնակետից 8 տոկոսային կետով ցածր է, բանկը դեռ ավելի շատ JGB է տնօրինում, քան բանկերը, ապահովագրական ընկերությունները, կենսաթոշակային ֆոնդերն ու օտարերկրյա ներդրողները՝ միասին վերցրած:

Համեմատության համար՝ 2013-ին Ճապոնիայի բանկի մասնաբաժինը մոտ 10% էր: Այսպիսով՝ Ճապոնիայի բանկը կրճատում է իր հաշվեկշիռը, բայց նրա ազդեցությունը պարտատոմսերի շուկայում շարունակում է մնալ բարձր:

But the BOJ Still Dominates Japan's Bond Market

BOJ Banks Life insurers Pension funds Foreigners Others



Sources: Bloomberg, BOJ


Bloomberg

Ապադոլարացման մասին խոսակցությունները, կարծես, առաջ են անցնում իրականությունից

Դոլարի մասնաբաժինը համաշխարհային պահուստներում նվազել է մինչև 57%՝ վերջին 30 տարվա ամենացածր մակարդակը: Սակայն այդ անկումը հիմնականում պայմանավորված է մի քանի երկրների, հատկապես Չինաստանի և Ռուսաստանի, քաղաքականությամբ: Պահուստներ տնօրինող երկրների մեծ մասում դոլարի դիրքը շարունակում է մնալ կայուն:

Ուստի սա դեռևս դոլարից համաշխարհային հրաժարում չէ, այլ՝ պահուստների աստիճանական դիվերսիֆիկացում:

Shares of Dollars and Big Four Currencies in Global Foreign Exchange Reserves Have Declined



Source: IMF Currency Composition of Official Foreign Exchange Reserves (COFER) year-end values.

Note: Big four currencies are USD, JPY, EUR, and GBP.

Այս շաբաթ 18, ընկերություններ հրապարակելու են իրենց ֆինանսական հաշվետվությունները 2026 թվականի երկրորդ եռամսյակի համար: Շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված Trip.com Group Limited (TCOM), Lennar Corporation (LEN), Forgent Power Solutions, Inc. (FPS), Kestra Medical Technologies (KMTS) և բազմաթիվ այլ ընկերությունների հաշվետվությունները:

No.	Ticker	Company	Sector	Industry	Country	↓ Market Cap	P/E	Price
1	 TCOM	Trip.com Group Ltd ADR	Consumer Cyclical	Travel Services	Singapore	25.53B	6.19	39.31
2	 LEN	Lennar Corp	Consumer Cyclical	Residential Construction	USA	19.13B	12.45	79.60
3	 FPS	Forgent Power Solutions Inc	Industrials	Electrical Equipment & Parts	USA	9.19B	-	30.20
4	 KMTS	Kestra Medical Technologies Ltd	Healthcare	Medical Instruments & Supplies	USA	1.39B	-	23.75
5	 LUXE	LuxExperience B.V ADR	Consumer Cyclical	Luxury Goods	Germany	1.00B	1.79	7.30
6	 RLGT	Radiant Logistics Inc	Industrials	Integrated Freight & Logistics	USA	384.96M	24.72	8.22
7	 PLAY	Dave & Buster's Entertainment Inc	Communication Services	Entertainment	USA	285.27M	-	8.20
8	 ALMU	Aeluma Inc	Technology	Semiconductors	USA	249.49M	-	12.95
9	 HITI	High Tide Inc	Healthcare	Pharmaceutical Retailers	Canada	230.82M	-	2.63
10	 IPHA	Innate Pharma ADR	Healthcare	Biotechnology	France	217.82M	-	1.95
11	 EPM	Evolution Petroleum Corp	Energy	Oil & Gas E&P	USA	150.77M	-	3.75
12	 CODA	Coda Octopus Group Inc	Industrials	Aerospace & Defense	USA	112.92M	22.89	10.01
13	 RFIL	RF Industries Ltd	Industrials	Electrical Equipment & Parts	USA	110.65M	81.99	10.20
14	 VRA	Vera Bradley Inc	Consumer Cyclical	Footwear & Accessories	USA	87.59M	-	3.08
15	 ISPR	Ispire Technology Inc	Consumer Defensive	Tobacco	USA	84.38M	-	1.47
16	 HYFT	MindWalk Holdings Corp	Healthcare	Biotechnology	USA	60.61M	-	1.29
17	 HAIN	Hain Celestial Group Inc	Consumer Defensive	Packaged Foods	USA	57.76M	-	0.64
18	 BIOX	Bioceres Crop Solutions Corp	Basic Materials	Agricultural Inputs	Argentina	25.92M	-	0.41

Monday, Sep. 14						
No events scheduled						
Tuesday, Sep. 15						
8:30 AM	Empire State Manufacturing Survey	Sep	-	-	20.6	
TBA	U.S. Federal Open Market Committee meeting	-	-	-	-	
Wednesday, Sep. 16						
8:30 AM	Retail Sales	Aug.	-	-	-0.6%	
8:30 AM	Import Prices	Aug.	-	-	-0.4%	
10:00 AM	Manufacturing & Trade: Inventories	Jul.	-	-	0%	
10:00 AM	NAHB Housing Market Index	Sep	-	-	35	
2:00 PM	Federal Reserve economic projections	-	-	-	3.8%	
2:00 PM	U.S. interest rate decision	-	-	-	3.8	
Thursday, Sep. 17						
8:30 AM	Housing Starts	Aug.	-	-	1.2M	
8:30 AM	Philadelphia Fed Business Outlook Survey	Sep	-	-	47.4	
8:30 AM	Weekly Jobless Claims	Sept. 12	-	-	-	
10:00 AM	Pending Home Sales Idx, M/M%	Aug.	-	-	-2.3%	
Friday, Sep. 18						
9:15 AM	Industrial Production, M/M%	Aug.	-	-	0.2%	
9:15 AM	Capacity Utilization %	Aug.	-	-	76.3%	
10:00 AM	Leading Indicators	Aug.	-	-	0.2%	

